

9982

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

(Կոմ. Յերիս իմս. Սեկցիա)

Հաստատված

Համ. Լ. Կ. ՅԵ. Մ. VII

համաժողովրդական

ընդհանուր

ЗКСМ

2-21

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
ЛЕНИНИЗМА
СССР

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

Գրանցվար № 98ր. հ. 514. Տիրամ 12,000
Պետրատի յերկրորդ տպարան Յերևանում-256

3KCM
2-2
ИНСТИТУТ
ИСТОРИИ
Академик Наум
СССР

1928 № 279

24 SEP 2006

09 DEC 2009

62569 ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Համամիութենական Լեհիցյան Կո-
մունիստական Ֆերիտաարգական
Միության**

(Կոմ. Ֆերիտ. Ինտ. Սեկցիա)

(Հաստատված Համ. ԼԿՅՆՄ 7-րդ համամիու-
թենական համագումարում)

1. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴՄԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵ-
ԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՌՍՅՈՒՄԸ

1. ՀամԼԿՅՆՄ անդամ է համարվում 14-ից
մինչև 23 տարեկան ամեն վոք, վորն ընդու-
նում է միության ծրագրին ու կանոնադրու-
թյունը, աշխատում է նրա կազմակերպու-
թյուններից վորևե մեկում, յենթարկվում է
միության բոլոր վորոշումներին, տալիս է ան-
դամվճար:

Ծ ա ն ո թ. — Միության 23 տարեկանի հա-
սած անդամները կարող են մնալ

01 JUN 2013

9982

կազմակերպության մեջ, վերաբեր
պատասխանող անդամներ (այսինքն՝ ունին
խորհրդակցական ձայնի իրավունք),
ընդ վերում, յեթե պատասխանող անդամ
ընտրվում է ղեկավար մարմիններից
վերին մեկի մեջ, ապա նա ստանում
է վճռական ձայնի իրավունք:

2. ՀամԼԿՅՆՄ անդամ և թեկնածու ընդու-
նելու կարգը հետևյալն է.

ա) Միության անդամ է ընդունվում բան-
վորական և գյուղացիական յերիտասարդու-
թյունը, առանց թեկնածուական ստաժի և
հանձնարարականների:

Ծ ա ն ո թ. — Բանվորների, ուրիշ աշխա-
տանքը չչահագործող գյուղացիների
ու անյանագործների՝ զարգացում սո-
վորող զավակները, վերոնք պաշ-
աշխատել են արտադրության և
գյուղատնտեսության ասպարիզում,
մինչև 18 տարեկան հասակը՝ միու-
թյան մեջ են ընդունվում նույնպես
առանց թեկնածուական ստաժի և
հանձնարարականների:

բ) Միության անդամ է ընտրվում թեկնածու


յին ընտրվում վոչ-պրոբատարական ծագման
սովորողները, ծառայողներն ու ինտելիգենտ-
ները:

գ) Թեկնածուների համար սահմանվում է
մեկ և կես տարվա թեկնածուական ստաժ:

դ) Թեկնածուների ընդունելութունը կա-
տարվում է ՀամԼԿՅՆՄ 3 տարվա ստաժ ու-
նեցող 2 անդամի և ՀամԿԿ (բ)՝ 2 տարվա ըս-
տաժ ունեցող մի անդամի հանձնարարականով,
կամ հանձնարարականների այդ թիվը կարող
է փոխարինվել ՀամԿ (բ) Կ՝ 3 տարուց վոչ
պակաս ստաժ ունեցող 2 անդամի հանձնարա-
րականով:

Ծ ա ն ո թ. 1. — Թեկնածուները յենթարկվում
են միության բոլոր վերոշումներին,
կրում են անդամների բոլոր պարտա-
կանությունները, ժողովներում ու-
նին խորհրդակցական ձայնի իրա-
վունք, սակայն չեն կարող ընտրվել
միության ղեկավար մարմինների
մեջ:

Ծ ա ն ո թ. 2. — Հանձնարարողները պատաս-
խանատու յեն իրենց կողմից հանձ-
նարարվածների համար, հանձնարա-



ընկալանքների անհիմն լինելու դեպքում յենթարկվում են միութենական պատիժների, մինչև միությունից հեռացնելը:

ե) Հանձնարարականների ստուգումը նախորդում է ընդունելությանը և կատարվում է միության տեղական կոմիտեների միջոցով:

զ) Միության անդամ և թեկնածու ընդունելու հարցը նախապես քննվում է բնիկ ընդհանուր ժողովում, բնիկ առաջադրությամբ, հաստատվում է ռազկոմի (քաղաքում), գավկոմի, ռայոնացման յենթարկված շրջաններում՝ շրջկոմների կողմից և կոմիտեյի հաստատումից հետո մտնում է ուժի մեջ:

է) Կոմյերիտական ստաժը հաշվվում է այն օրից, յերբ բնիկ ընդհանուր ժողովը վորոշում է անդամ ընդունել կամ թեկնածությունից անդամ փոխադրել:

3. Մի կազմակերպության յուրաքանչյուր անդամ մի ուրիշ կազմակերպության ռայոն փոխադրվելիս վերջինի կողմից մտցվում է նրա անդամների շարքը:

4. Միությունից վտարելը կարող է տեղի ունենալ ՀամԼԿՅԵՄ ծրագիրն ու կանոնա-

դրությունը, միության գիտցիպլինան խախտելու և աշխարհի հանցանքների համար, վորոնք միության հասարակական կարծիքի կողմից հանցավոր են համարվում:

5. Միությունից հեռացնելը տեղի յե ունենում այն բնիկ ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորի անդամն է տվյալ ընկերը, և հաստատվում է ռազկոմի (գավկոմի) կողմից. հեռացման վորոշումը ուժի մեջ է մտնում միայն միության վրոհիշյալ մարմինների կողմից հաստատվելուց հետո: Հեռացման վորոշումների դեմ կարելի յե բողոքել միության բարձրագույն մարմիններին, աստիճանական հաջորդականությամբ, մինչև Կենտկոմ:

6. Միության այն անդամները, վորոնք առանց հարգելի պատճառների 3 անգամ միմյանց յետևից չեն գնացել այն կազմակերպության ընդհանուր ժողովները, վորի անդամ են, կամ յերեք ամիս շարունակ անդամավճար չեն տվել, մեխանիկորեն դուրս են մտնում միությունից, առանց այդ մասին հատուկ վորոշման:

7. Միությունից հեռացված անդամների մասին իր ժամանակին տեղեկություն է տրվում

կենտկոմին (նախնական) և հրապարակվում է մամուլի մեջ:

11. ՀամԼԿՅԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է իմանա ՀամԼԿՅԵՄ ծրագրերն ու կանոնադրությունը, ահաբի կերպով մասնակցի իր միությունում ամբողջ աշխատանքին ու պայքարին, ճշտապահությամբ հաճախ նրա ընդհանուր ժողովներն ու ակումբները, ահաբի օրերն մասնակցի միություն և կուսակցության բոլոր քաղաքական կամպանիաներին, յերիտասարդությունում աշխատանքի ու կրթության նոր ձևերի կառուցման գործին և յենթարկվի միությունում ղեկավար մարմինների վերստանմանը:

9. Համամիությունական Լենինյան կոմյերիտությունում անդամ—այս մի բարձր կոչում է ամեն մի յերիտասարդ բանվորի ու գյուղացու համար. յուրաքանչյուր կոմյերիտական իր աշխատանքով ու կյանքով, միությունում մեջ ու նրանից դուրս, պետք է արդարացի այդ կոչումը, որ որի վրա իրագործելով Լենինի ավանդները, պետք է բարձր պահի ու սրբու-

թյամբ պահպանի իր կազմակերպություն և կոմունիստական կարմիր դրոշի պատիվն ու արժանապատվությունը:

Բոլոր կոմյերիտականները պետք է հիշեն, վոր ՀամԼԿՅԵՄ պահեստի ուժն է Համամիությունական կոմունիստական կուսակցության (բայելեիկներին), վոր ՀամԼԿՅԵՄ անդամները լավագույնները մտնում են նրա շարքերը, և պետք է պատրաստվեն պատվով կատարելու այդ մեծ ու դժվար պարտականությունը:

10. Ամեն տեղ ու ամենուրեք—խորհրդային յերկրի Փաբրիկներում ու գործարաններում և գյուղացիական տնտեսությունում մեջ, կարմիր բանակում և դպրոցում, պետական աշխատանքում, կոլլեկտիվում, կոմյերիտականը պետք է առաջինը լինի և իր մեծ ուսուցչի անվանն արժանի, ամենաաշխատունակը, յենաանդունը, ամենաազնիվն ու խիզախը, անձնուրաց կերպով հեղափոխությունը նվիրվածը և որինակ ծառայի ամբողջ յերիտասարդությունում ու բոլոր աշխատավորներին համար:

11. Կոմյերիտականը շարունակ հիշում է, վոր իր միությունը պրոլետարիատի ղեկատուության հաստատուն հենարանն է. կոմյերի-

և դեպի հաղթանակ տանող ուղին: Ուստի ամեն մի կոմյերիտական պետք է յեռանդով ուսումնասիրի Մարքսի ու Ենգելսի և նրանց գործը հանճարեղ շարունակողի— Լենինի ուսմունքը, Կոմունիստական կուսակցության և Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագրերն ու պատմությունը:

16. Կոմյերիտականը պետք է իմանա կուսակցության և խորհրդային իշխանության անելիքները, հետևի ԽՍՀՄ և մյուս յերկիրներում տեղի ունեցող հիմնական քաղաքական անցքերին և իր գիտելիքները հաղտրդի մնացած յերիտասարդությանն ու բոլոր աշխատավորներին:

17. Լենինյան Կոմյերիտմիության տնդամբ հիշում է, վոր միայն կուսակցության և կոմյերիտմիության շարքերի անհուղղող միասնականությունն է պրոլետարիատի ու գյուղացիության հաղթանակի յերաշխիքը, ուստի պետք է կուսակցության ղեկավարությամբ պայքարի՝ կուսակցությանն ու կոմյերիտմիությանը թուլացնելու ամեն տեսակ փորձերի և լենինիզմից կատարվող բոլոր թեքումների դեմ:

18. Կոմյերիտականը կուսակցության ոգնականն է և աշխատում է նրա անշեղ ղեկավարության տակ. ուստի յուրաքանչյուր կոմյերիտական միշտ և ամենուրեք պետք է չհակադրեն դիմագրի՝ կոմյերիտմիությունը կուսակցությանը հակադրելու փորձերին:

19. Յուրաքանչյուր կոմյերիտական հիշում է, վոր կոմունիստական պատանեկական շարժումը— պրոլետարական սերունդների՝ կյանքի ու պայքարի բարձրացող նոր ալիքն է, վոր պիտները Համամիութենական Լենինյան Կոմյերիտմիության ապագա անդամն է, և յեղքայրաբար ոգնում է պիտներին նրա ուսման, աշխատանքի յեւլ շինարարության մեջ, հաւկապես հոգ տանելով, վորպեսդի պատանի պիտներներից պատրաստվի Կոմյերիտմիությանը հաջորդող իսկապես կոմունիստական և առողջ նոր սերունդ:

20. Յուրաքանչյուր կոմյերիտական, վոր վարձու աշխատանք է կատարում քաղաքում կամ գյուղում, պետք է արհեստակցական միության անդամ լինի և ակտիվ կերպով աշխատի այդ միության մեջ, իր աշխատանքի մեջ իրեն չզատելով հասակավորներից:

21. Աշխատավորները ազատագրության, նոր հասարակություն կառուցելու համար մղվող պայքարը համառ և տեժական է լինելու. բանվոր դասակարգին հարկավոր են կոմունիզմի համար պայքարող ֆիզիքապես ուժեղ, առողջ, ամրակազմ, տոկուն մարտիկներ. ուստի յուրաքանչյուր. կոմյերիտական զբաղվում է սպորտով և ֆիզիքական կուլտուրայով:

22. Կոմյերիտականը հիշում է, վոր նա պետք է կարողանա զենքը ձեռքին պաշտպանել պրոլետարական հեղափոխությունը, վոր Կոմյերիտմիությունը Կարմիր բանակի և Կարմիր տորմիդի հենարանն է. ուստի յուրաքանչյուր կոմյերիտական պետք է ուղադրությամբ ուսումնասիրի ռազմական գործը, թե Կարմիր բանակում և թե Կարմիր տորմիդում առաջինը լինելով սովորելու մեջ, առաջինը՝ կարգապահության մեջ, առաջինը՝ մարտական գծի վրա:

23. ԽՍՀՄ հաջողությամբ սոցիալիզմ կառուցելու համար պետք է հաղթահարել անկուլտուրականությունն ու անգրագիտությունը. կոմյերիտականը շարունակ հիշում է Իլյիչի ավանդը՝ անգրագիտության վերացման

մասին և իր բոլոր ուժերով ոգնում, աջակցում է այդ աշխատանքին քաղաքում և գյուղում:

24. Հեղափոխական չե նա, ով չի կարողանում համառ կերպով աշխատել և սև աշխատանք կատարել. Կոմյերիտականը պետք է հիշի և իրագործի Իլյիչի այն ավանդը, թե ամեն մի գործ, վորքան էլ նա փոքր լինի, չեթե նա ոգնում է աշխատավորների պայքարին, — կոմունիզմի համար մղվող մեծ պայքարի մի մասն է:

25. Աշխատավորության պայքարը հաղթանակել է միայն աշխարհի մի վեցերորդ մասում. կապիտալիզմը դեռ իշխում է մնացած յերկիրներում. աշխատավորների պայքարը չի վերջանա, մինչև վոր հեղափոխությունը չհաղթանակի ամբողջ աշխարհում. յուրաքանչյուր կոմյերիտական պետք է ամենուրյա սովորական աշխատանքի ընթացքում հիշի, վոր նա, լենինյան դրոշի տակ կանգնելով, իր կյանքը նվիրելու չե կոմունիզմի համար պայքարելու մեծ գործին և պետք է պատրաստ լինի, կուսակցության առաջին իսկ կոչին կանգնելու մարտիկների առաջին շարքերում:

III. ՀամԼԿՅԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՉՍԿԱՆ ԿԱ-
ՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

26. ՀամԼԿՅԵՄ կառուցված է գեմոկրատա-
կան կենտրոնացման հիմունքներով.— մի վոր-
ևե ուսյոն սպասարկող կազմակերպություն
համարվում է բարձրագուս այդ ուսյոնի մա-
սերն սպասարկող բոլոր կազմակերպություն-
ների նկատմամբ:

27. ՀամԼԿՅԵՄ գլխավոր մարմիններն ընտ-
րովի յեն և իրենց ամբողջ աշխատանքի հա-
մար հաշվետու՝ իրենց ընտրող մարմինների
առաջ. ստորագրաս մարմինները յենթարկվում
են բարձրագուս մարմինների բոլոր վորոշում-
ներին:

28. Յուրաքանչյուր կազմակերպության
բարձրագույն ղեկավար մարմինը— ընդհանուր
ժողովն է, կոնֆերենցիան կամ համագումարը:

29. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ
համագումարն ընտրում են կոմիտե, վորը նը-
բանց գործադիր մարմինն է հանդիսանում և
ղեկավարում է տեղական կազմակերպության
ամբողջ ընթացիկ աշխատանքը:

30. ՀամԼԿՅԵՄ կառուցվածքի սխեման հե-
տևյալն է.

ա) ԽՍՀՄ տերրիտորիա— համամիութենական
համագումար— Կենտկոմ.

բ) Մարզեր (области), հանրապետություն-
ներ, նահանգներ.— մարզային (յերկրային)
կոնֆերենցիաներ, կոմյերիտմիության ազգա-
յին կազմակերպություններ և համագումարներ,
նահանգ. կոնֆերենցիաներ— մարզկոմներ (յեր-
կրկոմներ), ՀամԼԿՅԵՄ ազգային կազմակեր-
պությունների կենտկոմներ, նահանգկոմներ.

գ) Ոկրուզներ, գավառներ, ուսյոններ (աը-
դյունաբերական կենտրոններում). ոկրուգա-
յին, գավառական, ուսյոնական կոնֆերենցիա-
ներ— ոկրուգային, գավառական, ուսյոնական
կոմիտեներ:

դ) Գավառակներ*) (շրջաններ) գավառակա-
յին (շրջանային) կոնֆերենցիաներ— գավառա-
կային (շրջանային) կոմիտեներ.

ե) Ձեռնարկություններ, գյուղեր, հիմնար-
կություններ, բջիջների ընդհանուր ժողովներ
— բջիջների բյուրոներ:

31. Յենթարկման, հաշվետվության, միու-
թենական վորոշումների ընթացքի և վիճարկ-

*) Վրաստանում— թեմիներ և Ադրբեջանում
— գայրաներ: ԾԱՆ. ԹԱՐԳՄ.

որակարգը հայտարարվում են վոչ ուշ, բան համազումարից մեկ և կես ամիս առաջ։ Արտակարգ համազումարը հրավիրվում է կենտրոնական կոմիտեյի կողմից, նրա սեփական նախաձեռնությամբ, կամ միության վերջին համազումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի մի յերրորդի պահանջմամբ։ Արտակարգ համազումարները հրավիրվում են յերկու ամսվա ընթացքում։

Համազումարն որինական են համարվում, յեթե այնտեղ ներկայացված է Միության համազումարի հրավիրման մոմենտին ունեցած բոլոր անդամների առնվազն կես մասը։ Միության համազումարների ներկայացուցչական նորման սահմանում է կենտկոմը։

36. Այն դեպքում, յերբ կենտրոնական կոմիտեն՝ 35 հոդ. մատնանշված ժամանակամիջոցում արտակարգ համազումար չի հրավիրում, այդ պահանջող կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու կազմակերպչական բյուրո, վորը համազումար հրավիրելու խնդրում վայելում է կենտրոնական կոմիտեյի իրավունքներ։

37. Համազումարը լսում է հաստատում է

կենտրոնական կոմիտեյի և վերստուգիչ Տանձնաժողովի հաշվետվությունը, վերաբերում է փոփոխում և միության ծրագիրն ու կենտրոնական կոմիտեյի ընթացիկ հարցերի ընտրում և կենտրոնական կոմիտեյի անդամները, գլխավոր հանձնաժողովի անդամներ և վերստուգիչ Տանձնաժողովի։

38. Հո. Կենտրոնական մի համազումարից մի մասը ավայ ժամանակամիջոցում հանձնաժողովին և հանդիսանում է կենտրոնական կոմիտեն։

39. Կենտրոնական կոմիտեն ընտրվում է այն կազմով, վորը սահմանում է համազումարը։ Կենտրոնական կոմիտեյի անդամի դուրս գալու դեպքում կոմիտեյի կազմը լրացվում է համազումարում ընտրված փոխանդամների թվից, համազումարի վորոշած կարգով։

40. Կենտկոմն ուղղություն է տալիս ու ղեկավարում միության ամբողջ աշխատանքը, Համ. ԼԿՅԵՄ ներկայացուցիչն է հանդիսանում պետական հիմնարկություններում ու կազմակերպություններում, նշանակում է միության այն կենտրոնական որդանների խմբագրությունները, վորոնք աշխատում են իր վերահսկողություն տակ,

կազմակերպում և վարում և հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնները, բաշխում ե մրության միջոցներն ու ուժերը:

Կենտրոնական Կոմիտեն ունենում ե առնվազըն յերկու ամիսը մի ընդհանուր (պլենար) նիստ, փոխանդամները Կենտկոմի պլենումի բոլոր նիստերում ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով:

41. Կենտկոմի պլենումների միջև ընկնող ժամանակամիջոցներում միության ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար՝ Կենտրոնական Կոմիտեն ընտրում ե Կենտկոմի Բյուրո և կազմակերպչական ու գործադիր ընույթի ընթացիկ աշխատանքի համար—Քարտուղարութիւն, վորի կազմը վորոշում ե Կենտկոմի պլենումը:

42. Աշխատանքի հերթական հարցերի քննութիւն համար Կենտրոնական Կոմիտեն միութիւն համամիութենական համադումարների միջև ընկնող ժամանակամիջոցներում տարեկան մի անգամ գումարում ե ՀամԼԿՅԵՄ համամիութենական կոնֆերենցիա տեղական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից. կոնֆերենցիան խորհրդակցական ընույթ ե կրում, և նրա վորոշումները հաստատում ե Կենտկոմը:

43. Կենտկոմը կանոնավոր կերպով ինֆորմացիա յի տալիս տեղական կազմակերպութիւններին իր գործունէիւթյան մասին և այն լուսաբանում ե մամուլում:

V. ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

44. Կոմիտեի տական կազմակերպութիւնները ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի թույլտվութիւն կարող են միանալ և կազմել մարզային (յերկրային) միավորութիւններ. սրա համար պարտադիր պայման ե համարվում նույնանման կուսակցական միավորութիւն (об'единение) գոյութիւնը:

45. ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ ազգային հանրապետութիւնների (մարզերի) տերրիտորիաներն սպասարկող միութենական կազմակերպութիւնները հավասարեցվում են մարզային (կամ նահանգական) կազմակերպութիւններին, այսինքն՝ յենթարկվում են ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին:

46. ՀամԼԿՅԵՄ հուտով վորոշմամբ՝ կենտրոնից հեռու ընկած վայրերում ստեղծվում են ՀամԼԿՅԵՄ բյուրոներ, վորոնց նշանակում ե ՀամԼԿՅԵՄ կենտկոմն այն կազմով, վորը յու-

ըստանշուր առանձին դեպքում սահմանում ե
Կենտկումը: Այս բյուրոնները լինթադա յեն միմի-
այն ՀամԼԿՅՆՄ Կենտկումին:

47. Կոմյերիտմիության մարզային (յերկրային)
հերթական կոնֆերենցիան կամ համագումարը
հրավիրում ե մարզային (յերկրային) Կոմիտեն
(ազգ. Կոմյերիտմիության Կենտկումը) տարեկան
մի անգամ. արտակարգ կոնֆերենցիան կամ հա-
մագումարը—մարզային (յերկրային) Կոմիտեյի
(ազգ. Կոմյերիտմիության Կենտկումը) վորոշմամբ
կամ մարզի (յերկրի) կազմակերպություննե-
րի անդամները ընդհանուր ԲՊԻ $\frac{1}{3}$ -ի պահան-
ջով: մարզային (յերկրային) կոնֆերենցիայի
(ազգ. Կոմյերիտմիության համագումարի) ներ-
այացուցչական նորման սահմանում ե մարզա-
յին (յերկրային) Կոմիտեն (ազգ. Կոմյերիտմիու-
թյան Կենտկումը). մարզային (յերկրային) կոն-
ֆերենցիան (ազգ. Կոմյերիտմիության համագու-
մարը) լսում ե համատարում ե մարզային (յերկ-
րային) կոմիտեյի (ազգ. Կոմյերիտմիության
Կենտկումը) ե վերստուգիչ հանձնաժողովի հաշ-
վետմությունները, քննության ե առնում կոմյե-
րիտական աշխատանքի հարցերը, ընտրում ե
մարզային (յերկրային) կոմիտե (ազգ. Կոմյե-

րիտմիության Կենտկում) ե վերստուգիչ հանձնա-
ժողով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մարզային (յերկրային)
Կոմիտեյի (ազգ. Կոմյերիտմիության
Կենտկումը) ե վերստուգիչ հանձնաժո-
ղովի անդամները քանակը վորոշում ե
հիշյալ կազմակերպությունների կոն-
ֆերենցիան (համագումարը):

48. Մարզային (յերկրային) Կոմիտեն (ազգ.
Կոմյերիտմիության Կենտկումը) ընթացիկ աշխա-
տանքի համար ընտրում ե առանձին բյուրո՝ վոշ
պակաս քան 5 հոգույց:

Մարզային (յերկրային) Կոմիտեների (ազգ.
կազմակերպությունների կենտկումը) բյուրոն
հաստատվում ե ՀամԼԿՅՆՄ Կենտկումի կողմից:
Մարզային (յերկրային) կոմիտեների (ազգ.
կազմակերպությունների Կ. Կ.) քարտուղարնե-
րի համար անհրաժեշտ ե հետեյալ կուսակ-
ցական կոմյերիտական ստաժը. ինտելլիգենտ-
ների համար—ՀամԼԿՅՆՄ 4 տարվա ստաժ.
ՀամԿԿ(բ.) 3 տարվա ստաժ. բանվորների ու
գյուղացիների համար—ՀամԼԿՅՆՄ 3 տարվա
ստաժ, ՀամԿԿ(բ.) 1 տարվա ստաժ:

49. Մարզային (յերկրային) Կոմիտեն (ազգ.

Կոմիերիտմիութեան Կենտկոմը) նշանակում է կոմիերիտմիութեան՝ իր հսկողութեան տակ աշխատող որդանի խմբադրութիւն, ղեկավարում է ստորին կազմակերպութիւնների աշխատանքը, միութեան ներկայացուցիչն է հանդիսանում կուսակցական և արհեստակցական կազմակերպութիւններում, կապ է պահպանում խորհրդային մարմինների հետ. միութիւնն ինֆորմացիա չէ տալիս իր աշխատանքների մասին, ինչպես մամուլում, այնպես և կազմակերպութեան մեջ ղեկուցումներ տալու միջոցով, և կանոնավորապես հաշվետւութիւններ է ներկայացնում իր գործունեւութեան մասին ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի սահմանած ժամանակամիջոցներում և նրա վորոշած ձևով: Մարդային (յերկրային) Կոմիտեին (ազգ. Կոմիերիտմիութեան Կ. Կ.) պլննումը ղումարվում է վոշ ուշ, քան յերկու ամիսը մի անգամ:

ՎԼ. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

50. Միութեան հերթական նահանգական կոնֆերենցիան հրավիրում է նահանգական կոմիտեին վոշ ուշ, քան տարեկան մեկ անգամ, իսկ

արտակարգ կոնֆերենցիաները հրավիրվում են նահանգկոմի վորոշմամբ կամ կազմակերպութեան զահանգի տերրիտորիայում դանվող անդամների ընդհանուր թվի կես մասի պահանջմամբ:

Նահանգ կոնֆերենցիան լսում է հաստատում է նահանգկոմի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետւութիւնը, քննութեան է տնում ալյա նահանգի կոմիերիտական աշխատանքի հարցերը, ընտրում է նահանգկոմ, վերստուգիչ հանձնաժողով և ՀամԼԿՅԵՄ համամիութեական համագումարի պատգամավորներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Նահանգկոմի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ թիվը վորոշում է նահանգական կոնֆերենցիան:

51. Նահանգական Կոմիտեն ղեկավարում է Կոմիերիտմիութեան ստորադաս կազմակերպութիւններին, նշանակում է նահանգ. որդանի (յեթե ալյալիսին կա) խմբադրութիւն, կազմակերպութեան ներկայացուցիչն է հանդիսանում նահանգական կուսակցական և արհեստակցական կազմակերպութիւններում, կապ է պահպանում խորհրդային մարմինների հետ, հաշվետւութիւններ է ներկայացնում կենտկոմին նրա նշանալ

կած ժամանակամիջոցներում և նրա սահմանափակումը: Նահանգկոմի պլենումը զսմարվում է վոչ ուշ, քան յերկու ամիսը մեկ անգամ:

52. Ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար ընտրվում են նահանգկոմների բյուրոներ վոչ պակաս, քան հինգ մարդուց. նահանգկոմների քարտուղարներին հաստատում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը:

Նահանգական Կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է հետևյալ կուսակցական և կոմյունիստական ստաժը. ինտելիգենտների համար—ՀամԼԿՅԵՄ 4 տարվա ստաժ, ՀամԿԿ(բ.) 3 տարվա ստաժ, բանվորների և գյուղացիների համար—ՀամԼԿՅԵՄ 3 տարվա ստաժ, ՀամԿԿ(բ.) 1 տարվա ստաժ (բացառություն թույլ է տրվում միայն Կենտկոմի հավանությունը):

53. Կոնֆերենցիաների միջև ընկնող ժամանակամիջոցներում նահանգական կոմիտեները պարբերաբար ինֆորմացիոն ղեկուցումներ են ներկայացնում քաղաքային (աշխատական) և գավառական կազմակերպությունների ընդհանուր ժողովներին կամ կոնֆերենցիաներին. բացի դրանից, նահանգ. կոմիտեները զուգարում են նահանգկոմի ընդլայնած պենսիաներ կամ

տվյալ կազմակերպության գավկոմներին և աշխատանքի ներկայացուցիչների նահանգական խորհրդակցություններ:

VII. ՈՅՐՈՒԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

54. Միության ոկրուգային կոնֆերենցիան զուգարում է ոկրուգային կոմիտեն վոչ ուշ, քան տարեկան մեկ անգամ, իսկ արտակարգ զուգարվում է ոկրուգային կոմիտեյի վորոշմամբ, կամ ոկրուգային կազմակերպության անդամների թվի կես մասի պահանջմամբ:

Ոկրուգային կոնֆերենցիան լսում է հաստատում է ոկրուգային կոմիտեյի և վերստուգիչ հարձնաժողովի հաշվետվությունները, քրենության և առնում տվյալ ոկրուգում կոմյունիստության կատարելիք աշխատանքի հարցերը, ընտրում է ոկրուգային կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և համամիութենական համագումարի պատգամավորներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ոկրուգային կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը վորոշում է ոկրուգային կոնֆերենցիան:

55. Ոկրուգային կաթիտեն հաստատում և միության ռալոնական կազմակերպություններն ու բժիշկներին լուսայոնական կազմակերպություններն այնուհետև ներկայացրում են մարդային (յերկրային) կոմիտեներին (կամ ազգ. կոմյերիտմության կենտկոմներին) ի հաստատություն], բաշխում և միության ուժերն ու միջոցները շրջանի սահմաններում, ղեկավարում և միության ստորադաս կազմակերպություններին, կազմակերպության ներկայացուցիչն և հանդիսանում ոկրուդի կուսակցական, խորհրդային և արհեստակցական կազմակերպություններում և իր գործունեյության մասին կանոնաւոր կերպով հ շվիտություններ և ներկայացնում մարդային կոմիտեին (կամ ազգային կոմյերիտմության կենտկոմին) Կենտկոմի սահմանած ժամանակամիջոցում և նրա վորոշած ձևով:

Ոկրուգային Կոմիտեյի պլենումը զումարմում և վոշ ուշ, քան յերկու ամիսը մեկ անգամ:

56. Կազմակերպության ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար ոկրուգային Կոմիտեն իր միջից ընտրում և ոկրուգային Կոմիտեյի բյուրո, առնվազն 5 հոգուց բաղկացած: Ոկրուգկոմի քարտուղարին հաստատում

և մարդային (յերկրային) Կոմիտեն (կամ ազգ. կոմյերիտմության կենտկոմը):

Ոկրուգկոմի քարտուղարի համար սահմանվում և հետևյալ կուսակցական և կոմյերիտական ստաժը. ինտելիգենտների համար—ՀամԼԿՅԵՄ 3 տարվա ստաժ, ՀամԿԿ(բ.) 2 տարվա ստաժ, բանվորների ու գյուղացիների համար—ՀամԼԿՅԵՄ 2 տար. ստաժ, ՀամԿԿ (բ.) 1 տար. ստաժ: Միության մարդկոմի (ազգ. կոմյերիտմության Կենտկոմի—յերկրկոմի) համանությամը և բացառություն թույլ տրվում ստաժի տեղության հարցում:

57. Ոկրուգային կոմիտեները կոնֆերենցիաների միջև ընդհուդ ժամանակաշրջաններում պարբերաբար լոնֆորմացիոն ղեկուցումներ են տալիս քաղաքային կամ ռալոնական կազմակերպության ընդհանուր ժողովներին կամ կոնֆերենցիաներին. բացի զրոնից, ոկրուգային կոմիտեները զումարում են ընդլանած ոլլենումներ կամ ռալոմների և տվյալ կազմակերպության խոշոր բժիշկների ներկայացուցիչներ շրջանային խորհրդակցություններ:

58. Խոշոր ոկրուգային քաղաքներում բարձրագույն կոմիտեյի թույլտվությամը կարող են

ստեղծվել ռաբինական կազմակերպություններ,
նահանգական քաղաքների ռայկոմները հետ
հավասար իրավունքներով:

VIII. ԳՍՎԱՌԱԿԱՆ (ԳՍՂԱԲԱՅԻՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

59. ՀամԼԿՅԵՄ զավառական (ռայոնական) կոնֆերենցիան հրավիրում է զավառական (ռայոնական) կոմիտեն վաղ ուշ, քան 6 ամիսը մեկ անգամ, իսկ արտակարգ հրավերներով է զավառական (ռայոնական) կոմիտեի ղեկավարը և զավառական (ռայոնական) կազմակերպության բոլոր անդամների կեսը պահանջում: Գավառական (ռայոնական) կոնֆերենցիան լսում է հաստատված (ռայոնական) կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի և աշխատությունները, քննությունները և կոմիտեի ղեկավարի աշխատանքները զավառում (ռայոնում), ընտրում է զավառական (ռայոնական) կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և ՀամԼԿՅԵՄ նահանգական համագումարների պատգամավորներ: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գավառական (ռայոնա-

կան) կոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների քանակը վերջում է զավառական (ռայոնական) կոնֆերենցիան:

60. Գավառական կոմիտեն հաստատում է զավառի բժիշկներին, զավառակային, ռայոնական կազմակերպությունները: Գավառական (ռայոնական) կոմիտեն բաշխում է ուժերն ու միջոցները զավառի (ռայոնի) շրջանակում, ղեկավարում է ոտորադաս կազմակերպությունների աշխատանքը, կազմակերպության ներկայացուցիչն է հանդիսանում կուսակցական և արհեստակցական կազմակերպություններում, կապ է պահպանում զավառի (ռայոնի) խորհրդային օրգանների հետ, կազմակերպում է բժիշկների, զավառակային կոմիտեների և ռայկոմների ներկայացուցիչների խորհրդակցություն և կանոնավոր կերպով իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում նահանգական կոմիտե:

Գավառական (ռայոնական) կոմիտեի պլենումը գումարվում է վաղ ուշ, քան ամիսը մեկ անգամ:

61. Գավառական (ռայոնական) կոմիտեն իր

միջից ընտրում ե գավկումի (ռայկումի) բյուրո, առնվազն 3 անդամից բաղկացած:

Գավկումի (ռայկումի) բարտուղարի համար պարտադիր ե հետևյալ կուսակցական ե կոմյունիստական ստաժը. ինտելիգենտների համար— ՀամԼԿՅԵՄ 3 տարվա ստաժ, ՀամԿԿ(բ.) 2 տ. ստաժ, բանվորների ու գյուղացիների համար— ՀամԼԿՅԵՄ 2 տարվա ստաժ, ՀամԿԿ(բ.) 1 տ. ստաժ ե միութենական բարձրագույն կոմիտեի հաստատումը (միայն սրա հավանությունը թույլ ե տրվում բացառություն ստաժի տեվություն հուրցում):

IX. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

62. Գավառական (շրջանում) բարձրագույն մարմինը համարվում ե միության տվյալ գավառական (շրջանում) յեղած անդամների ընդհանուր ժողովը:

Գավառակային (շրջանային) ընդհանուր ժողովը գումարում ե գավառակային (շրջանային) կոմիտեն վոչ ուշ, քան յերկու ամիսը մեկ անգամ:

Գավառակային (շրջանային) ընդհանուր ժողովը

քննում ե հաստատում ե գավառակային կոմիտեի (շրջկոմի) հաշվետվությունը, քննություն առնում գավառական (շրջանում) կոմյունիստական աշխատա. քի հարցերը, ընտրում ե գավառակային (շրջանային) կոմիտե ե ՀամԼԿՅԵՄ գավառական ու այլ կոնֆերենցիաների պատգամավորներ:

ԾԱՆՈԹ.— Լայնածավալ գավառակներում (շրջաններում), վորտեղ ընդհանուր ժողովների գումարումը դժվարությունների հետ ե կապված, թույլ ե տրվում ընդհանուր ժողովը փոխարինել գավառակային (շրջանային) կոնֆերենցիաներով. այսպիսի կոնֆերենցիաները գումարվում են վոչ ուշ, քան յերեք ամիսը մեկ անգամ:

64. Գավառակային (շրջանային) կոմիտեյին ընտրում ե գավառակային (շրջանային) ընդհանուր ժողովը կամ կոնֆերենցիան վեց ամիս ժամանակով:

ԾԱՆՈԹ.— 1. Գավառակային կոմիտեյի (շրջկոմի) քանակը վորոշու ե գավառակի (շրջանի) ընդհանուր ժողովը (կոնֆերենցիան):

ԾԱՆՈԹ.— 2. Այն գավառակներում, վորտեղ գյուղական բնակիչների թիվը յերեքից

սղակառու, գաղափարային (չրջանային) կոմիտե չի կազմակերպվում, գաղափարն կոմիտեները կարող են այդ գաղափարակների գաղափարային կենտրոնները բնիկներին հանձնարարել գաղափարային կազմակերպության առանձին պարտականությունների կատարումը:

65. Գաղափարային կոմիտեն (չրջկոմը) ուղղություն է տալիս և ղեկավարում ՀամԼԿՅԵՄ տվյալ գաղափարի (չրջանի) բոլոր բնիկների աշխատանքը, կազմակերպում է նոր բնիկներ և ներկայացնում է գաղափարային (ոկրուգային) կոմիտեի հաստատմանը, կազմակերպության ներկայացուցիչն է հանդիսանում գաղափարի (չրջանի) կուսակցական, խորհրդային արհեստակցական և մյուս հասարակական կազմակերպություններում, իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում գաղափարային (ոկրուգային) կոմիտեին:

66. Գաղափարային (չրջանային) կոմիտեն գումարվում է փոշ ուշ, քան ամիսը մեկ անգամ. գաղափարային կոմիտեի (չրջկոմի) ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար ընտրվում է բյուրո՝ փոշ տրեքս, քան յերեք անգամից բաղկացած:

Գաղափարային կոմիտեի (չրջկոմի) քարտուղարն անդաման պետք է ՀամԿԿ(Բ.) անդամ կամ թեկնածու լինի և հաստատվում է գաղափարային (ոկրուգային) կոմիտեի կողմից:

ԾԱՆՈԹ.— Սյա կանոնից շեղում թույլ է տրվում բացառիկ դեպքերում գաղափարային (ոկրուգային) կոմիտեի հավանությունը:

Մ. ՀամԼԿՅԵՄ ԲՁԻՁՆԵՐԻ ՄԱՍԻՆ

67. ՀամԼԿՅԵՄ կազմակերպության հիմքը կոմիտեի կազմակերպության բնիկն է: Բնիկը հաստատվում է ոկրուգային, գաղափարային կամ չրջանային կոմիտեի կողմից ՀամԼԿՅԵՄ փոշ պահեստ քան յերեք անգամի կազմով:

68. Բնիկը կազմակերպվում է ձեռնարկության, հիմնարկության կից, գյուղում, գյուղացում. բնիկը բանվորագյուղացիական յերեքսարկության լայն մասնակցություն ՀամԼԿՅԵՄ հետ կապող կազմակերպություն է:

Բնիկը հիմնական անելիքներն են.

ա) ծվյալ ձեռնարկության, հիմնարկության, գյուղի, գյուղացի՝ ԼԿՅԵՄ անդամների համալրմբումը, ԼԿՅԵՄ ազդեցությունն ամրացնելու և

անկուտակցական աշխատավոր յերիտասարդության վրա տարածելու համար, ինչպես նաև կուսակցական ու կոմյունիստական լոգունները իրագործումը մասսաների մեջ:

բ) ՀամԼԿՅԵՄ շարքերը նոր անդամներ գրավել:

գ) Ակտիվ կերպով մասնակցել ձեռնարկության, գյուղի, դպրոցի և այլ հիմնարկությունների վողջ կյանքին և շինարարությունը:

դ) Աշխատել բանվոր, բաղրակ և գյուղական յերիտասարդության տնտեսական զրույթյան և կրթական բարելավման ուղղությամբ:

ե) Մասնակցել միություն, կուսակցություն և խորհրդային իշխանություն կողմից կիրառվող քաղաքական կամախնայանքին:

զ) Քաղաքական-լուսավորական աշխատանք կատարել իր անդամների շարքերում:

է) Աջակցել միություն ղեկավար մարմիններին նրանց ամբողջ աշխատանքի մեջ:

69. Մեծ քանակությամբ բանվոր յերիտասարդություն ունեցող խոշոր ձեռնարկություններում, բոլոր համքարություններն ընդգրկող համագործադրանային բջիջի ներսում յուրաքանչյուր առանձին գեպքում, ռայկոմի կամ գավկոմի (քաղաքում) հաստատմամբ, կարող են կազմակերպվել

բջիջներ ըստ համքարությունների (համքարայնիդ բջիջներ):

70. Ընթացիկ աշխատանքները վարելու համար բջիջի ընդհանուր ժողովն ընտրում է յերեք անդամից վոչ պակաս կազմով բջիջի բյուրո, առնվազն յերեք ամիս ժամանակով:

ԾԱՆՈԹ.— Այն բջիջում, վորի անդամների թիվը 7-ից ավելի յե, ընտրվում է բջիջի մի քարտուղար:

71. ՀամԼԿՅԵՄ բջիջներն իրենց ներկայացումը ունեն կոմբջիջում, գործարկումում, տեղկումում, գյուղխորհրդում և մյուս հասարակական կազմակերպություններում:

72. Բջիջը կանոնավորապես հաշիվ է առլիս իր աշխատանքի մասին ռայկոմին կամ շրջկոմին և գավկոմին:

Ճ. ՀամԼԿՅԵՄ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

73. Յերեկոյան զպրոցներին, բանֆակներին, կուսերին և շախապինակոչներին ուսման կայաններին կից, յեթե այնտեղ կա միություն առնվազն յերեք անդամ, կազմակերպվում են ՀամԼԿՅԵՄ խմբակներ:

Խմբակների նպատակն է. քաղաքական-լուսա-

վորական աշխատանք կատարել ուժորոգների կամ ուսման կայանի նախադիմադրողների մեջ, ապահովել նրանց նկատմամբ միության ազդեցությունը, որին ահկ ցույց տալ մնացած ամբողջ յերիտասարդութեանը՝ ինչպես կարգապահութիւն սահմանելու, այնպես և համապատասխան մարմիններին՝ աշխատանքը ճիշտ կերպով կազմակերպելու գործում:

74. Խմբակն իրավունք չունի նոր անդամներ ընդունելու և կոնֆերենցիաների ու այլ պատգամավորներ ընտրելու:

75. Խմբակի բոլոր անդամները պետք է անպայման բջիջի անդամներ լինեն:

76. Խմբակի գործադիր մարմինը հտնդիստնում և բյուրոն կամ քարտուղարը, վորոնք ընտրվում են խմբակի ընդհանուր ժողովի կողմից և հաշվետու յեն նրա առաջ:

Յերեկոյան դպրոցներին, բանֆակներին, կուսերին կից խմբակներն աշխատում են ՀամԼԿՅԵՄ այն կոմիտեների ղեկավարութեամբ, վորոնց տերիտորիաներում գտնվում և համապատասխան քաղաքային ուսման կայանը:

ԾԱՆՈԹ.—ՀամԼԿՅԵՄ կոմիտեների և քաղորդանների փոխհարաբերութեանը վո-

րոշվում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և Հանր. Քաղ. Վարչ. (ՍՄՔ) վերաբերյալ հատուկ կանոնադրութեամբ:

XII. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՏՈՐՄԻՂԻ ԿՈՄ ՅԵՐԻՏՄԻՌԻԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ

77. Կոմյերիտմիութեանական աշխատանքի ղեկավարութեանը Կարմիր բանակում և տորմիդում իրագործում են Կարմիր բանակի ու տորմիդի քաղորդանները ՀամԼԿՅԵՄ կոմիտեների հետ համերաշխ:

ԾԱՆՈԹ.—ՀամԼԿՅԵՄ կոմիտեների և քաղորդանների փոխհարաբերութեանը վորոշվում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և Հանր. Քաղ. Վարչ. (ՊՈԻՐ) վերաբերյալ առանձին կանոնադրութեամբ:

78. ՀամԼԿՅԵՄ հնգից վոշ պակաս անդամի ներկայութեան գեպքում Կարմիր բանակի և տորմիդի մասերում կազմակերպվում են կուսակցութեան աջակցող կոմյերիտական խմբակներ:

79. Կարմիր բանակում ու տորմիդում գտնվող կուսակցութեան աջակցող կոմյերիտական խմբակները իրավունքները, պարտականութեանն-

ընն ու աշխատանքը վերցնելու և առանձին կանոնադրութեամբ, վերը հաստատուած և Համ-
ԼԿՅԵՄ Կենտկոմի և բանվորադուգուգրական
Կարմիր բանակի Քաղաքական Վարչութեան
կողմից:

80. Բարձրագույն դպրոցներում և բարձրագ-
ուգրական դպրոցներում ստեղծվում են վաշտա-
յին բՆԻՅՆԵՐ, վերոնք միանում, կազմում են
դպրոցական կոլլեկտիվներ. վաշտային բՆԻՅՆԵՐ
ու դպրոցական կոլլեկտիվներն ընտրում են բՆԻ-
ՅԻ բոլոր և կոլլեկտիվի բոլոր:

ԾԱՆՈԹ. Բարձ. դպրոցների և Ռազմ. բարձ.
դպրոցների կամյերիտմութենական
կազմակերպութեաններն աշխատում
են՝ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և Հանր.
Քաղ. Վարչ. կողմից հաստատուած
առանձին կանոնադրութեան հիման
վրա:

XIII. ՀամԼԿՅԵՄ ՅԵՎ ՀամԿԿ(բ.) ՓՈԽՀԱՐԱ-
ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

81. Ամբողջ միութեանը կուսակցութեան կող-
մից անմիջորեն ղեկավարելու նպատակով, Համ-
ԼԿՅԵՄ Կենտկոմը, հանդիսանալով միութեան

ղեկավարող մարմինը և ընտրվելով ՀամԼԿՅԵՄ
համագումարում, անմիջորեն յենթարկուած և
ՀամԿԿ(բ.) Կենտկոմին: ՀամԼԿՅԵՄ տեղական
կազմակերպութեանների աշխատանքին ուղղու-
թեան են տալիս և ղեկավարում ՀամԿԿ(բ.)
համապատասխան նահանգական, ռայոնական,
գաւառական, մարզային կազմակերպութեաննե-
րը: ՀամԿԿ(բ.) մարմինների հետ կապ պահպա-
նելու համար ՀամԼԿՅԵՄ մարմինները ներկա-
յացուցիչներ են ուղարկում ՀամԿԿ(բ.) համապա-
տասխան մարմինները:

XIV. ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԵՏՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՈՒ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

82. Կապ պահպանելու և կոնտակտ ստեղծե-
լու համար միութեան իր ներկայացուցիչներն և
ուղարկում աշխատանքի պաշտպանութեան բա-
ժինները, ժողովրդական լուսավորութեան բա-
ժինները, արհմիութեանները և այն հիմնարկու-
թեանները, վերոնք յերիտասարդութեան շահերը
շոշափող աշխատանք են կատարում:

83. Միութեան՝ պետրդաններում և արհմիու-
թեաններում աշխատող ներկայացուցիչները կա-

նորնափորացեա հաշիվ են տալիս իրենց աշխատանքի մասին այն կազմակերպութիւններին, վորոնց կողմից ուղարկված են:

XV. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԻՍՅԵԳ-ԼԻՆԻ ՄՍՍԻՆ

84. Ամենախիստ գիտելիքները կոմյեքիտմիութեան մեջ—ՀամԼԿՅԵՄ բոլոր անդամները և միութեան բոլոր կազմակերպութիւնները ամենաառաջին պարտականութիւնն և միութենական կենտրոնների վարչութիւնները պիտի և ի կատար ածվեն արագութեամբ և ճշտօրէն. միաժամանակ միութեան ներսում բոլոր վիճելի հարցերի քննութիւնը միանգամայն ազատ և այնքան ժամանակ, քանի զեռ համապատասխան վարչութիւն չի ընդունված:

85. Բարձր կազմակերպութիւնների վարչութիւնները չկատարելու և այլ զանցանքների համար՝ կազմակերպութիւնը չենթարկվում և պարտաւանքի (порицание), ժամանակավոր կոմիտե չենշանակվում վերինից, և կատարվում են ընդհանուր վերացուցակազրութիւն (կազմակերպութեան ցրում): Կոմյեքիտմիութեան առանձին անդամները չենթարկվում են միութենա-

կան պարտաւանքի, հետապնդողներն զարտաւանքի, միութենական պատասխանատու աշխատանքից ժամանակավորապես հեռացվում, վտարվում են միութեանից:

Թեկնածու փոխադրելը, վորպես միութենական պտտի միջոց, չի թույլատրվում:

ԾԱՆՈԹ.—ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ նաև ՀամԿԿ(բ.) անդամ և թեկնածու չեն, միութեան կանոնադրութիւնը կամ ծրագիրը խախտելու դատքում այդ զանցանքի (проступок) համար պտտախանութիւն են կրում. վոր միայն միութենական, այլ նաև կուսակցական կարգով:

86. Կորդատահական զանցանքները քննութեան են տանվում քիջներին կողմից և քաղաքակրթելու դեպքում—Կոմիտեներին կից ստեղծվող կոմիտիկատային հանձնաժողովի կողմից:

Կոմիտիկատային հանձնաժողովներն աշխատում են ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի հաստատած հատուկ հրահանգի հիման վրա:

87. Կոմիտիկատային հանձնաժողովներն ստեղծվում են միութենական կոմիտեներին կից, ըս-

կրած ռայոնականից. նրանց կազմն ընտրվում է միության այն հին անդամներից, վորոնք ՀամԿԿ(բ.) անդամ են և կուտակցականորեն — կոփված ընկերներ: Կոնֆրիկտային հանձնաժողովը քննություն է առնում բողոքները, բողոքարկումները և գործի համապատասխան քննությունից հետո հանում է իր վճիռը. հանձնաժողովի վճիռները հաստատվում են Կոմիտեյի կողմից:

XVI. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

88. Վերստուգիչ հարձնաժողովներն ընտրվում են համապատասխան համագումարներում (կոնֆերենցիաներում) վոչ պակաս, քան յերեք անդամից, վորոնք պետք է ունենան ՀամԿԿՅԵՄ առնվազն 3 տարվա ստաժ և կուտակցական առնվազն մեկ տարվա ստաժ:

89. Վերստուգիչ հանձնաժողովները վերլուստուգման են յենթարկում.

ա) Գործերի ընթացքի արագությունն ու ճշտությունը միության մարմիններում և ապարատի կանոնավորությունը.

բ) Դրամական միջոցները, վորոնք ստացվում

են միության անդամներից դանդաղ մասնատրումների (отчисл.), գանձումների և այլ կարգով.

գ) Միության կողմից ստեղծվող ոժանգակ կազմակերպությունների (ակումբներ, սպորտհրապարակներ և այլն) ինվենտարն ու միջոցները:

XVII. ՄԻՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

90. Դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից, մասնատրություններից, նյութական ոժանգակություններից և այլ տեսակ հասույթներից:

91. Անդամավճարները ՀամԿԿՅԵՄ անդամների ու թեկնածուների համար պարտադիր են և սահմանվում են նրանց ամսական աշխատավարձի առնվազն $1\frac{1}{2}\%$ -ի չափով. անդամավճարների չափի յերկու կատեգորիա յեսահմանվում, նայելով ոռճկի քանակին, առաջին կատեգորիան վճարում է $1\frac{1}{2}\%$, յերկրորդ կատեգորիան — 1% :

92. Անորոշ աշխատավարձ ստացող անձանց համար, որինակ՝ զյուղացիների համար, անդա-

մալճարներն ու մուտքի մճարները սահմանում են տեղական նահանգական կամ խոտեքը:

93. Անդամալճարներից բոլորովին ազատվում են գործադարձները և սոցիալ. ապահովության նպաստներով ապրողները. անդամալճարներից ազատվող բոլոր անդամների ցուցակ և պահվում ԲՋԻՆՈՒՄ:

94. ՀամԼԿՅԵՄ անդամ կամ թեկնածու ընդունվելիս մուտքի վճարները գանձվում են աշխատավարձի 20% չափով, և այս տոկոսների վճարից վաշ վաք չի ազատվում:

95. ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ ՀամԿԿ(բ.) անդամ կամ թեկնածու չեն, ազատվում են ՀամԼԿՅԵՄ անդամալճար տալուց:

96. ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ և թեկնածու տարեկան հինգ կոպեկ և մուծում (ինտերնացիոնալ վճար) հողուա շուրժուական կապիտալիստական յերկրներում գտնվող յերիտասարդական յեղբայրական կազմակերպությունների ոգնության ֆոնդի:

97. Անդամալճարների և միութենական մասնաշարքումների գանձման կարգը սահմանվում և

ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի հաստատած հատուկ հրամանով:

Համամիութենական Լե-
նինյան Կոմունիստական
Յերիտասարդական Միու-
թյան (Կոմ. Յեր. Յնտ.—ԿԻՄ-ի
ոեկցիա) այս կանոնադրու-
թյունը հաստատված է Համ.
ԼԿՅԵՄ VII համամիութենա-
կան համագումարի կողմից:





ՀՀ Ազգային գրադարան



NL0191438

907

Case

ԴԻՆԵ Ե Տ ԿՈՄ.

2081

907